*Հավելված N 1*
*ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ. հուլիսի 3-ի N 1.3 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026թ. հուլիսի 3-ի N 1.3 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ**-26/33

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ**: Ընթացակարգի հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն և տեխնիկական բնութագիրը ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն**: Ընթացակարգի հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«Օդաճնշական դողեր նախատեսված 275/70R22.5 MAN LIONS CITI 12C ավտոբուսների համար, համասեզոնային, առանց օդախցիկի, կառուցվածքը-ռադիալ, պահպանաշերտի գծանկարը՝ ունիվերսալ, նախատեսված բոլոր սռնիների համար: Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում: Անվադողի վրա պետք է նշված լինեն՝ Speed index՝ ոչ պակաս J(100), LOAD index ոչ պակաս 152/148; MAX.LOAD ոչ պակաս 3550/3150 կգ: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ պակաս 2025-2026թթ: Գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 80 000 կմ: Օրիգինալ բարձր պրեմիում որակի ըստ MAN գործարանի հաստատված կանոնակարգի՝ երաշխիքի տրամադրման պարտադիր պայմանի, բացառձակապես՝ MICHELIN ֆիրմայի THE MICHELIN X INCITY EV Z մոդելի, YOKOHAMA ֆիրմայի 120U մոդելի, GOODYEAR ֆիրմայի URBANMAX MCA մոդելի, CONTINENTAL ֆիրմայի Conti Urban HA 5 մոդելի, PIRELI ֆիրմայի U02 մոդելի, Bridgestone ֆիրմայի U-AP002 մոդելի ապրանքանիշերի: Անվադողերը պետք է լինեն նոր չօգտագործված: Գույնը սև, փոխադրումը և բեռնաթափումը մատակարարի կողմից:

**Փոփոխության հիմնավորում**: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ